ընդունայն լինէր վաստակ և աշխատութիւն նորին վասն բարեկարգութեան տեղւոյն եւ կալուածոց Աթոռոյն, եւ չէր գիւրին ազատիլ 'ի ձեռաց պարտատերաց, և գալուստ նորին չէր ինչ օգուտ Աթոռոյն, գիտելով զբարս հնագունից· զի եթէ Պողոս տկարանայր 'ի նուաճել եւ 'ի բարեկարգութիւն ածել զնոսա, և պատճառանօք ելանել խորհէր յԱթոռոյն, ուր մնայր նմա, որ ըստ ամենայնի արհամարեալ էր յաչս նոցա և վատթար քան զամենեսին Քաղաքացի անուամբ, թող զի Եղիա եպիսկոպոս որ եկեալ էր յԱթոռն ըստ գրութեան Պողոսի, չի թողոյր ումեք ձեռնամուխ լինել գործոց Աթոռոյն։ Ուստի աղաչանօք թախանձէր զՔաքարիա մտերիմ իւր չխորհիլ զայսպիսիս և չստիպել գնալ յԱթոռն, եթէ իբրեւ հասարակ միաբան և անգործ ծերունի, յօժարութեամբ յանձն առնու երթալ յերուսաղէմ և լինել 'ի կարգս աղօթաւորաց։ Ի վերջոյ առանձին թղթով աղաչէ զնա չթախանձել զինքն գործով իւիք գնալ յԱթոռն, և արկանել 'ի ներքոյ անտանելի լծոյ, առաւել քան զկարողութիւն իւր, գուցէ զանհնազանդութեան անուն ժառանգեալ՝ իսպառ 'ի բաց կացցէ 'ի միաբանութենէ, և այլ սոցին նման բանք։ Այս ամենայն միտք եւ գրուածք ծանօթ էին Պողոսի, բայց սիրով ընկալաւ զնղիա, զի հանդարտութեամբ վարէր, և կարգեաց զնա Նուիրակ Զմիւռնիոյ վիճակին, եւ պատրաստէր ելանել 'ի ճանապարհ· զի եթէ ասէ այսու եղանակաւ վարի Եղիա, բարի է, իսկ եթէ փոխեալ զբարս իւր մարտիւ վարեսցի, յայնժամ հարկ լինի հակառակօքն դիմադիր լինել նմա։

Ասացուք և վասն պարտուցն, թէ զինչ արար Պողոս եպիսկոպոս զինի գալստեան իւրոյ յԱթոռն· զառաջին բաժինս պարտուց վճարեաց Պողոս բաղում նեղութեամբ և տառապանօք·

148,321 Դահեկան բաժնիւ (թադսիտ)։
248,257 Առանց բաժնի զի բռնաւորք էին։
108,315 » Փոխանակագրով վճարեալ 'ի Կոստանդինուպօլիս։
504,893 Այս է առաջին բաժինն՝ և վասն երկրորդին վարանէր միշտ Պողոս 'ի միտս իւր, թէ ո՞րպիսի եղանակաւ 'ի գլուխ տարցէ զայն· զի առնուազն 600 քսակ արծաթոյ պէտս ունէր, և ինքն դատարկացեալ էր 'ի դը-